չհասկացայ, թէ ինչ ասաց Սուսանը, միայն նրա խօսքերից որոշեցի պարսկերէնին շատ մօտ բառը «լռէ՛»:

Երեւում էր, Հիւբբիի անզգուշութիւնը սաստիկ խռովութիւն պատճառեց պառաւի մէջ. նա վեր կացաւ, եւ նոյն լեզուով մրթմրթաց աղջկան մի քանի խօսքեր. երկուսը միասին ճանապարհ ընկան: Սուսանը ամենեւին չնայեց ինձ եւ ոչինչ չասաց, միայն Հիւբբին մի քանի քայլ հեռանալով կրկին դարձաւ, եւ փայլուն աչքերը իմ երեսին ձգելով, ժպտեց եւ գլուխը թափ տալով, շարունակեց իր թեթեւ քայլերը խորհրդական պառաւի հետ: Քանի որ-պէից յետոյ նրանք աներեւութացան մերձակայ լեռների մէջ:

«Հիւբբին անբախտ աղջիկ է... նրա մայրը կորած է... Հիւբբին պտռում է իր մօրը, եւ նրա հայրը...: Ո՞վ էր նրա հայրը, — այդ խօսքը խորամանկ պառաւը չթողեց գեղեցիկ երեխային վերջացնել: Երեւի, մի աղօտ գաղտնիքով վարագուրուած էր փոքրիկ գուշակողի ծագումը, որը նա անզգուշութեամբ պէտք է երեւան հանէր. եթէ ոչ, ինչո՞ւ պէտք է Սուսանը այնպէս վրդովուեր, ինչո՞ւ իսկոյն պէտք է հեռանար ինձանից: Նա վախեցաւ՝ չիցէ թէ երեխան մի նոր անզգոյշ խօսք դուրս թռցնէ իր բերնից եւ հեռացրեց նրան: Անպատճառ այստեղ մի գաղտնիք կար, որ պէտք էր գիտենալ, բայց որպէ՞ս գիտենալ: Խորամանկ պառաւը գնաց, կորաւ անյայտ ուրուականի պէս: Որտե՞ղ կարելի էր տեսնել նրան միւս անգամ: Բայց ի՞նչ է նշանակում նրա ստեպ տեսակցութիւնները Կարօյի հետ: Կարօն ի՞նչ գործ ունի այն մոլաշրջիկ թափառականի հետ. եւ նրանց յարաբերութիւնների հետ կապ ունի մի երրորդ անձնաւորութիւն — «ամրոցի աղջիկը», — ահա գաղտնիքի գլխաւոր մասը, որ ծածկուած էր խաւարի մէջ...

Բայց իմ մտքից չէր դուրս գալիս փոքրիկ գուշակողի պատկերը, ես առաջին անգամ տեսնում էի այնպիսի սիրուն երեխայ, որի մէջ կար այնքան համարձակ անմեղութիւն, որի սիրտը այնքան տաք եւ զգայուն էր: Ես հաւատում էի նրա խօսքերին, որոնցմով նա կարդաց իմ անբախտ ապագան. ես հաւատում էի, որովհետեւ «գերագոյն ոգին» այնպիսի անկեղծ արարածներին միայն կյայտնէ մարդկանց ճակատագրի գաղտնիքները: Ահա՛, ասում էի ես, հաւատարիմ դստերք բնութեան, որոնք ապրում են երկնքի թռչունների նման, «ո՛չ վարում են, ո՛չ ցանում են եւ ո՛չ հնձում են», բայց նրանք էլ աղքատ են եւ ապրում են ողորմութիւնով...

Կրկին տիրեցին ինձ սեւ մտածութիւնները, կրկին իմ սիրտը ընկաւ անհանգիստ խռովութեան մէջ: Ես պառկած էի սրբազան ծառերի հովանու ներքոյ, բայց չուշացաւ քունը, նա վերջ տուեց իմ անհանգստութեանը: